ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

Ռ. Ա. ՍԱՖՐԱՍՏՅԱՆ

1948 թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված «Ցեղասպանության հանցագործության կանխման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայում հատուկ չի նշվում, թե ցեղասպանություն պատկանում է պետական հանցագործությունների թվին: Դա լուրջ բացթողում է, քանի որ, ինչպես ցույց է տալիս պատմական փորձը, այդ լայնածավալ ոճրագործությունը հնարավոր է նախապատրաստել և իրականացնել միայն տարբեր մակարդակի ու բնույթի պետական կառույցների փոխկապակցված գործողությունների շնորհիվ: Այն պետությունը, որը իրականացրել է ցեղասպանություն, ցեղասպան պետություն (genocidal state) է և ունի իր բնորոշ գծերը: Նա տարբերվում է մյուս բոլոր պետություններից ճիշտ այնպես, ինչպես մարդասպանը՝ մյուս բոլոր մարդկանցից, և ինչպես քաղաքակիրթ մարդկության ընդհանուր թվի մեջ մարդասպանները կազմում են չնչին թիվ, այնպես էլ նոր և նորագույն պատմության ցեղասպան պետությունները սակավաթիվ են: Այդ պատճառով կարևոր գիտական խնդիր է նրանց առաջացման և կառուցվածքի առանձնահատկությունների ուսումնասիրումը:

Վերջին տասնամյակների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ցեղասպանությունները տեղի են ունենում որոշակի տիպի սոցիալական և պետական կառուցվածք ունեցող հասարակություններում[1]: Կարևորվում են նաև մշակութային բնութագրերը[2]: Մեծ ուշադրություն է հատկացվում ցեղասպանական դաղափարախոսությունների դերին, գիտական շրջանառության մեջ է մտցվել նույնիսկ «զաղափարական ցեղասպանություն» արտահայտությունը, քննարկվում են զաղափարական ցեղասպանությունների առանձնահատկությունները[3]: Հետազոտվում են նաև ցեղասպան հասարակության և պետության այլ բաղադրիչները:

Օսմանյան կայսրությունը նոր ժամանակների առաջին ցեղասպան պետությունն էր և կարող է դիտարկվել որպես նման տիպի պետության «դասական» օրինակ: Եթե այս տեսանկյունից փորձենք վերաբերել և վերաիմաստավորել Օսմանյան կայսրության պատմությունը, ապա կարող ենք, դնալով դարերի խորքը, բացահայտել XIX դարի վերջի—XX դարի սկզբի ցեղասպանության քաղաքականության ու դաղափարախոսության ակունքները, հայերի դանգվածային կոտորածների ընթացքում թուրքական իշխանությունների կողմից օգտագործված միջոցների և մեթոդների նախատիպերը:

---

[1] Տե՛ս I. L. Horowitz. Taking Lives: Genocide and State Power. New Brunswick, 1997, pp. 152—153.

[2] E. Staub. The Roots of Evil: The Origins of Genocide and Other Group Violence. Cambridge, 1992, p. 32.

[3] K. Jonassohn. The Consequences of Ideological Genocides and Their Role in Genocide Prevention.—Armenian Review, 1989, vol. 42, № 4/168, pp 1–16.

Սակայն սարդ հայրենական մասնագետները չեն անդրադարձել այս հարցի համակողմանի ուսումնասիրմանը[4]: Մինչդեռ, վերջին տասնամյակներում, արևմտյան օսմանագիտության մեջ գնալով մեծ տարածում է ստանում ծագումով թուրք ամերիկացի միջնադարագետ Հալիլ Ինալջըքի բնորոշումը, համաձայն որի Օսմանյան կայսրությունը միջնադարում «միջինարևելյան տիպիկ կայսրություն էր՝ կառավարման իր բոլոր դարավոր սկզբունքներով ու հաստատություններով»[5]: Մեկ այլ տեղ նա բնութագրում է XVI դարի վերջի Օսմանյան կայսրությունը նույնիսկ որպես «զարգացման ամենաբարձր մակարդակի հասած միջինարևելյան կայսրության օրինակ»[6]: Լինելով օսմանյան միջնադարի լավ գիտակ, նա իր Օսմանյան կայսրության «դասական» շրջանի պատմությանը նվիրված հանրածանոթ մենագրությունում ստեղծում է այդ պետության ադավառված և իդեալականացված պատկերը: Այսպես օրինակ՝ ներկայացնելով երկրի կառավարման համակարգը, նա խուսափում է բնութագրել հպատակ ժողովուրդների նկատմամբ իրականացվող քաղաքականությունը, որի հիմքում գտնվում էին բռնության այլևայլ ձևեր, ընդհուպ մինչև զանգվածային կոտորածների կազմակերպումը: Սամ էլ, գրելով պետության իրավական համակարգի մասին, նա ոչինչ չի ասում այլադավանների նկատմամբ կիրառվող իրավական դիսկրիմինացիայի վերաբերյալ: Տպավորություն է ստեղծվում, որ լուրջ մասնագետը, չցանկանալով դիմել բացահայտ կեղծիքի, փորձում է շրջանցել իրականությունը, ինչն, ի վերջո, հանգեցնում է նրա սքողմանը:

Վերը նշված թեզի վերջնական նպատակն է՝ լռության մատնելով օսմանյան պետության դաժան քաղաքականությունն այլազգիների նկատմամբ՝ մերժել նաև հայերի ցեղասպանության փաստը, ինչը և իրականացնում է ամերիկացի թուրքագետ Սթենֆորդ Շոուն իր Օսմանյան կայսրության ու հանրապետական Թուրքիայի պատմությանը նվիրված տխրահռչակ երկհատորյակում[7]: Այստեղ արդեն գործ ունենք ոչ թե պատմական իրականության շրջանցման, այլ նրա ուղղակի կեղծման հետ, ընդ որում, ամերիկացի դիտնականը գերազանցում է գրանում նույնիսկ ցեղասպաններին՝ երիտթուրքերին[8]:

---

[4] Կարելի է հիշատակել միայն 1997 թ. հրատարակված ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանի և Ա. Մ. Այվազյանի աշխատությունները: Տե՛ս Մ. Գ. Ներսիսյան. Օսմանյան պետության «բազմաքաղաքակրթական միախառնի» մասին.—ՊԲՀ, 1997, 2 (146), էջ 41—58 և A. M. Ayvazian The Armenian Rebellion of the 1720s and the Threat of Genocidal Reprisal. Yerevan, 1997. Հայոց ցեղասպանությանը նվիրված իր հիմնարար աշխատությունում պրոֆեսոր Վահագն Տադրյանը (ԱՄՆ) սահմանափակվում է միայն «մահմեդական սրբազան օրենքի» անդրադարձով և բնութագրում է այն որպես «ամարիզմ օսմանյան իրավական կարգի և ազգամիջյան հակամարտությունների հիմքը»: Տե՛ս V. N. Dadrian. The History of the Armenian Genocide. Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus. Providence—Oxford 1995, pp. 3–6.

[5] H. Inalcik. The Turkish Impact on the Development of Modern Europe.—In: The Ottoman State and Its Place in World History. Ed. by K. H. Karpat. Leiden, 1974, p. 53.

[6] Տե՛ս H. Inalcik. The Ottoman Empire. The Classical Age 1300—1600. New York—Washington, 1973, p. 3

[7] St. J. Show. History of the Ottoman Empire and Modern Turkey. Vol. I Empire of the Gazis: The Rise and Decline of the Ottoman Empire. 1280–1808. Cambridge, 1977; St. J. Show and E. K. Show. History of the Ottoman Empire and Modern Turkey. Vol. II: Reform, Revolution, and Republic: The Rise of Modern Turkey 1808–1975. Cambridge, 1977.

[8] R. G. Hovannisian. The Armenian Genocide and Paterns of Denial.—In: The Armenian Genocide in Perspective. Ed. by R. G. Hovannisian. New Brunswick and Oxford. 1986, pp. 124—125.

Ուշագրավ է, որ նրա կեղծիքների շարանը սկսվում է միջնադարին նվիրված գրքի արդեն առաջին հատորից[9]։ Այդ կեղծիքների աղբյուրը թուրքական պատմագրությունն է։ Նրա ազդեցությունը այնքան մեծ է եղել, որ, ըստ պրոֆեսոր Ս. Վրիոնիսի, առանց Իսմայիլ Հաքքը Ուզունչարշըլըի աշխատությունների և «Իսլամի Հանրագիտարանի» թուրքական հրատարակությունից լայնորեն օգտվելու Շոուն ընդհանրապես չէր հաջողվի ավարտին բերել իր գիրքը[10]։ Օսմանյան պատմության «հավասարակշռված պատկեր»[11] ստեղծելու քողի ներքո ամերիկացի արևելագետը իրականում քարոզել է թուրքական պատմագիտության կոնցեպցիաները։

Լույս տեսնելուց հետո Ինալջըքի աշխատությունը դարձավ արևելագետների սեղանի գիրքը, հիմք ծառայելով շատ նոր օսմանագիտական հետազոտությունների համար։ Շոուի երկհատորյակը, չնայած մի շարք ճանաչված մասնագետների խիստ բացասական կարծիքին[12], դրվեց լայն շրջանառության մեջ։ Ինչպես նշում էր ժամանակին պրոֆեսոր Սպերոս Վրյոնիսը, ամերիկյան մասնագետների, ինչպես նաև Պետական դեպարտամենտի ու Կենտրոնական հետախուզական վարչության ներկայացուցիչների երիտասարդ սերունդը Մերձավոր և Միջին Արևելքի մասին իրենց գիտելիքների մի զգալի մասը ստանում են այդ գրքից[13]։ Այն հանգամանքը, որ գիրքը հրատարակվել է աշխարհի ամենահեղինակավոր համալսարանական հրատարակություններից մեկում՝ «Cambridge University Press»*-ում, նպաստում է նրա տարածմանը նաև այլ երկրներում։*

Այսպիսով գիտական ու հասարակական գիտակցության մեջ Օսմանյան կայսրության այնպիսի պատկեր է ստեղծվում, որը չի տարբերում նրան միջնադարյան այլ պետությունների շարքից, դարձնում է սովորական *կայսրություն։ Փաստորեն, փորձ է արվում հանել նրան ցեղասպան պետությունների շարքից։ Տասնամյակներ առաջ գիտական ոլորտում սկսված գործընթացը 1997 թ. Թուրքիայի կառավարությունը տեղափոխեց միջազգային ամենահեղինակավոր կազմակերպություններից մեկը՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ից պահանջելով նշել այդ ցեղասպան պետության կազմավորման 700-ամյակը։*

Օսմանյան կայսրության «սովորական միջնադարյան պետություն» լինելու մասին թեզը ընդունելի չէ և հակասում է իրականությանը։ Անտարակույս, ունենալով տիպաբանական նմանություն Միջին Արևելքի կայսրությունների հետ, մանավանդ, Աբբասյանների խալիֆայության, օսմանյան Թուրքիան միջնադարում արդեն իսկ հանդես բերեց մի շարք կարևոր առանձնահատկություններ, որոնք բխում էին օսմանյան թուրքերի կողմից ստեղծած հասարակության ու պետության բուն էությունից և նրանց գոյության վերջին տասնամյակներին հանգեցրին վերաճման ցեղասպան պետության։

1. Օսմանյան պետության առաջացումը

XIV—XV դդ. ձևավորվեցին օսմանյան պետական կառույցի ու սոցիալական կառուցվածքի հիմնական բաղադրամասերը. ի հայտ եկան քաղաքական ու ռազմավարական բնույթի մի շարք առանձնահատկություններ, որոնք իրենց խորը կնիքը դրեցին այդ պետության պատմության ողջ ընթացքի վրա։

---

[9] *Տե՛ս* S. Vryonis. A Critical Analysis: Stanford J. Shaw. History of the Ottoman Empire and Modern Turkey. Vol. I. Thessaloniki: Institute of Balkan Studies, 1983.

[10] Ibid. p. 49.

[11] St. J. Show. History of the Ottoman Empire... Vol. I. p. VII.

[12] *Ավելի մանրամասն այդ հարցին անդրադարձել է Գ. Գ. Մախմուրյանը, տե՛ս* Новая история Армении в трудах современных зарубежных авторов. Ереван, 1993, с. 140—143.

[13] S. Vryonis. A Critical Analysis..., p. 6.

Օսմանյան կայսրության սկիզբը դրվեց քայքայվող Իկոնիայի սելջուկյան սուլթանության կազմում գտնվող ոչ մեծ ուջբեյությունում (սահմանամերձ տիրույթ) XIII դարում։ Այն պատկանում էր օղուզ թյուրքերի քայը ցեղի մաս կազմող Օսմանի տոհմին։ Ս. Շոուի բնորոշմամբ այդ վաչկատուն ցեղը չուներ արմատներ և պատրաստ էր իր ծառայությունները առաջարկել այն տիրոջը, որից ակնկալում էր ավելի մեծ շահ[14]։ Այն քոչել էր Միջին Ասիայից և Իկոնիայի սելջուկյան սուլթանների կողմից նրանց մի մասի առաջնորդ Էրթողրուլը. Օսմանի հայրը. որպես ուջբեյություն ստացել էր քրիստոնյաներով բնակեցված տարածք Փոքր Ասիայի հյուսիս-արևմուտքում։

Սկզբնական շրջանում օսմանցիների թվաքանակը չէր անցնում 400 ընտանիքից[15]։ Նրանց գոյության հիմնական աղբյուրը, ինչպես նաև գլխավոր զբաղմունքը, տեղաբնակ քրիստոնյա խաղաղ հողագործ բնակչության կողոպուտն ու ասպատակությունն էր, որին մասնակցում էր ողջ ցեղը, կանայք և երեխաները ներառյալ, ինչպես դա ընդունված էր քոչվոր ցեղերի մոտ[16]։ Սակայն արդեն Օսմանի օրոք որոշում է ընդունվում ավելի կազմակերպված բնույթ հաղորդել ռազմական գործողություններին։ Այդ նպատակով ստեղծվում են աքինջիների հեծելազորային ստորաբաժանումներ։ Այս ոչ կանոնավոր ջոկատներ, փաստորեն, լավ զինված հրոսակախմբեր էին, որոնք աչքի էին ընկնում իրենց դաժանությամբ։ Հետագայում աքինջիները դարձան օսմանյան բանակի կարևոր ստորաբաժանում, որն իր գործողությունները սկսում էր հիմնական զորքից երկու օր առաջ[17]։ Նրանց հիմնական խնդիրն էր ոչնչացնել և թալանել հակառակորդի գյուղերը[18], հրկիզել նրա քաղաքներն ու գյուղաքաղաքները[19] և ոչ մեծ ջոկատներով արշավելով հակառակորդի երկրում՝ սարսափ տարածել բնակչության վրա[20]։ Ուջբեյությունը չուներ հստակ սահմաններ, այդ պատճառով օսմանցիների ասպատակությունների զոհ էին դառնում ինչպես իրենց անմիջական իշխանության տակ գտնվող քրիստոնյաները, այնպես էլ հարևան բեյությունների կամ էլ սահմանակից Բյուզանդիայի հպատակները։

Օսմանյան ուջբեյությունը սկզբնական շրջանում ոչնչով չէր տարբերվում Իկոնիայի սելջուկյան սուլթանության արևմտյան սահմանամերձ տարածքներում գոյություն ունեցող այլ ուջբեյություններից[21]։ Այստեղ լիովին իշ-

---

[14] St. J. Show. History of the Ottoman Empire... p. 13.

[15] D. Avcıoglu. Türklerin Tarihi. Birinci Kitap. Dördüncü Basım. Istanbul. 1982. s. 162.

[16] А. М. Шамсутдинов. Проблемы становления османского государства по турецким источникам XIV—XV вв.—В кн.: Османская империя: система государственного управления, социальные и этнорелигиозные проблемы. М., 1986. с. 32.

[17] I. H. Uzunçarşılı. Osmanlı Devleti Teşkilâtından Kapukulu Ocakları. I. Ankara, 1944. s. 257.

[18] S. Sami. Kamus-i Türki. Dersaadet. [illegible], s. 45—46 (արաբատառ).

[19] Ahmet Rasim. Resimli ve Haritalı Osmanlı Tarihi. 2. Cild, 2. Tabı, Istanbul, 1328—1330. s. 149—150 (արաբատառ). Հանրապետական շրջանի թուրք պատմաբանները ամեն կերպ սքողում են աքինջիների նման գործելակերպը։ Օրինակ, Իսմայիլ Հաքքը Ուզունչարշըլըն համեմատում է նրանց... ժամանակակից մասնագիտացված ստորաբաժանումների հետ։ Տե՛ս I. H. Uzunçarşılı. Osmanlı Tarihi. I. Cilt. Kuruluştan Istanbulun Fethine Kadar. Ankara, 1947. s. 262.

[20] M. Z. Pakalın. Osmanlı Tarihi Deyimleri ve Terimleri Sözlüğü. I. Ikinci Basılış. Istanbul, 1971, s. 39.

[21] Տե՛ս ուջբեյությունների մասին Р. А. Гусейнов. Уджи — военно-феодальный институт в Малой Азии в XI—XII вв.—В кн.: Тюркологический сборник 1974. М., 1978, с. 213—229.

խում էին կառավարման աշիրեթային (տոհմացեղային) ձևերը[22], որոնք համապատասխանում էին թյուրքական ցեղերի այն ժամանակվա մակարդակին և նպատակաուղղված էին զինված կողոպուտի առավել օպտիմալ կազմակերպմանը։ Սոցիալական կառուցվածքը պարզունակ էր։ Փաստորեն, օսմանյան բեյլիկությունում ողջ ցեղը իրենից ներկայացնում էր իշխող խավ, տեղական քրիստոնյա բնակչության կոլեկտիվ հարստահարիչ[23]։ Նրա անդամների միջև էր բաժանված ողջ հողատարածքը՝ իքթաների (պայմանական տիրույթների) ձևով։

Սակայն, օգտվելով իրենց աշխարհագրական դիրքի ընձեռած հնարավորություններից (անմիջական սահման այն ժամանակվա քրիստոնյա աշխարհի առաջատար ուժի՝ Բյուզանդական կայսրության հետ)՝ օսմանյան բեյերը կարողացան իրենց ավազակային նկրտումներին հաղորդել ջիհադի կամ ղազավաթի («անհավատների դեմ սրբազան պատերազմի») ձև և հանդես գալ որպես ողջ մահմեդական աշխարհի ներկայացուցիչներ։ Դա նրանց հնարավորություն տվեց իրենց ձեռքերում զգալի ուժ կենտրոնացնել և հիմք նախապատրաստել լայնածավալ էքսպանսիայի համար։

Օսմանյան բեյությունը դարձավ մոլեռանդ և արկածախնդիր անհատ ղազիների՝ «անհավատների» դեմ զինված պայքարի առաջամարտիկների կամ էլ նրանց այլևայլ խմբավորումների հավաքատեղի, որոնք այստեղ են հաստատվում Փոքր Ասիայի այլ բեյություններից[24]։ Միջնադարյան թուրք պատմիչ ու բանաստեղծ Աշըք Փաշազադեն իր տարեգրության մեջ, բացի ղազիներից, հիշատակում է նաև երեք այլ համանման խմբավորումներ՝ լավ կազմակերպված, մահմեդական աշխարհի տարբեր տարածաշրջաններում լայնորեն տարածված ու մեծ համբավ վայելող դերվիշներից և ախիներից, ինչպես նաև մարտնչող կանանցից կազմված[25]։ Դրանց պետք է ավելացնել նաև մահմեդական զանազան թարիքաթների (միստիկական եղբայրությունների) բազմաթիվ ներկայացուցիչներին[26]։

Այդ կազմակերպությունները կարևոր դեր կատարեցին օսմանյան պետականության կայացման մեջ։ Մասնավորապես ախիները նպաստեցին կործանումից փրկված քաղաքների կյանքի վրա թուրքերի հսկողության հաստատմանը[27]։ Մյուսները համալրում էին ուլեմաների դասի շարքերը, որոնց դերը օսմանյան բեյությունում չափազանց մեծ էր։ Այդ մահմեդական ֆանատիկոս կղերները ղեկավարում էին ձևավորվող պետական կառույցների մեծ մասը։ Սակայն նրանց գլխավոր խնդիրն էր զենքի ուժով «տարածել իսլամը անհավատների» շրջանում։ Նրանցից շատերը մասնակցում էին ռազմական գործողություններին և ինչպես գրում է թուրք պատմաբանը, «մի բուռ մյուրիդների (աշակերտների — Ռ. Ս.) հետ միասին ճզմում էին հազարավոր թշնամիների»[28]։ Նույն ախիները մեծ դեր ունեցան օսմանյան բանակի առաջին կիսականոնավոր ու կանոնավոր ստորաբաժանումների ստեղծման գոր-

---

22 I. H. Uzunçarşılı. Osmanlı Devleti Teşkilatına Medhal. Istanbul, 1941, s. 143.

23 С. Ф. Орешкова. Государственная власть и некоторые проблемы формирования социальной структуры османского общества.—В кн.: Османская империя: система государственного управления, социальные и этнорелигиозные проблемы. М., 1986, с. 5.

24 P. Wittek. The Rise of the Ottoman Empire. London, 1938, p. 41.

25 Տե՛ս А. М. Шамсутдинов. Проблемы становления османского государства..., с. 36—37.

26 F. Köprülü. Osmanlı Devletinin Kuruluşu. Ankara, 1959, s. 95–102.

27 S. Yerasimos. Azgelişmiş sürecinde Türkiye. 1. Cilt: Bizanstan Tanzimata. Istanbul, 1977, s. 194.

28 Ibid., s. 101.

ծում։ Մասնավորապես, նրանց ղեկավարության ներքո կազմավորվեցին առաջին ենիչերիական ջոկատները[29]։

Օսմանյան առաջին բեյերը նույնիսկ պաշտոնապես էին զինում Փոքր Ասիայի այլ թյուրքական բեյությունների ղեկավարներին, խնդրելով զինված օգնություն ցուցաբերել իրենց՝ արևմուտքում «սրբազան պատերազմ» վարելու համար, և աջակցություն էին ստանում նրանցից շատերից[30]։

Օսմանյան բեյության հզորացման մեջ կարևոր դեր կատարեցին նաև Փոքր Ասիայից այստեղ մեծ քանակությամբ քոչած յուրյուկները և թաթարները (վաչկատուն թյուրքական ցեղեր)։ Նրանց այստեղ գրավում էր հարուստ ավարի հնարավորությունը։ Ինչպես վկայում է թուրք պատմաբանը, նրանց միջավայրում նույնպես ակտիվություն էին ցուցաբերում ֆանատիկոս դերվիշները, որոնք դարձել էին զարգացման շատ ցածր մակարդակի վրա գտնվող և շամանիզմի ազդեցությունից դեռևս լիովին չձերբազատված այդ քոչվորների հոգևոր առաջնորդները[31]։ Այդ դերվիշների բարոյական հատկանիշների մասին պատկերացում է տալիս օսմանյան վաղ միջնադարի լավ գիտակներից մեկի՝ Ֆուադ Քյոփրյուլյուի քալենդերիյե թարիքաթին պատկանողների բնութագիրը, համաձայն որի նրանք աչքի էին ընկնում իրենց «նիհիլիզմով» և «ահավոր իմմորալիզմով»[32]։

Օսմանյան բեյերին և հետագայում՝ սուլթաններին հաջողվեց յուրյուկների ու թաթարների խաշար զանգվածների ակտիվությունը օգտագործել, ինչպես նշում է մեկ այլ թուրք պատմաբան, «պետության համար ամենաարդյունավետ ձևով»[33]։ Այդ «արդյունավետ» ձևերից էին նրանց օգտագործումը նվաճված հողերի գաղութացման համար, ինչպես նաև, որպես հիմնական զինուժ։ Յուրյուկների և թաթարների մի մասին նվաճված տարածքներից հատկացվում էին ոչ մեծ հողակտորներ (չիֆթլիք), նրանց վրա պարտավորություն էր դրվում մշակել այն և անհրաժեշտության դեպքում մասնակցել զինված գործողություններին յայաների ու մյուսելլեմների նորաստեղծ ջոկատներում, դրա փոխարեն նրանք ազատվում էին հարկերի վճարումից, իսկ ռազմական գործողություններին մասնակցելու ընթացքում՝ ստանում էին ռոճիկ[34]։ Այդ ստորաբաժանումները ստեղծվեցին համաձայն նախապես պատրաստված ծրագրի, որի հեղինակն էր ուլեմաների դասի ներկայացուցիչ Ջենդերելի Քարա Հալիլը, որը կապված էր ախիների եղբայրության հետ[35]։ Պատահական չէր նաև այն հանգամանքը, որ յայաներն ու մյուսելլեմները ստացան հատուկ համազգեստ, որը կրկնօրինակում էր ախիների հագուստը։ Այդ համազգեստը, գրում էր մեկ այլ ուլեմա, Հոջա Սադեդդինը, վկայում էր նրանց արտոնյալ դիրքի մասին[36]։

Վերը նշված ստորաբաժանումների ստեղծումը օսմանյան պետության ձևավորման պատմության վաղ շրջանի կարևոր և բազմանշանակ իրադարձություններից էր։ Այն բարձրացրեց բանակի մարտունակությունը, հնարավորություն տվեց քոչվորների մի մասին ներգրավելու պետական կառույց-

---

29 Ц. Георгиева. Еничерите в българските земи. София, 1988, с. 30—33.

30 Տե՛ս այդ մասին M. Akdağ. Türkiye'nin Iktisadi ve İçtimai Tarihi, C. 1: 1243—1453. Istanbul, 1974, s. 153.

31 F. Köprülü. Osmanlı Devletinin..., s. 97—102.

32 Ibid., s. 99.

33 M. T. Gökbilgin. Rumeli'de Yürükler, Tatarlar ve Evlad-ı Fatihan. Istanbul, 1957, s. 19.

34 İ. H. Uzunçarşılı. Osmanlı Tarihi..., s. 38—39.

35 Н. Е. Петросян. К истории создания янычарского корпуса.—В кн.: Тюркологический сборник 1978. М., 1984, с. 192.

36 Տե՛ս D. Avcıoğlu. Türklerin Tarihi..., s. 163.

ների մեջ, նպաստեց նրանց՝ նստակյաց կյանքի անցմանը։ Այդպիսով սկիզբ է դրվում օսմանյան դյուղացիությանը։

Մահմեդականացման քողի ներքո օսմանյան բեյերը քրիստոնյաների ստրկացման և Թուրքացման քաղաքականություն սկսեցին իրականացնել արդեն XIV դարից։ Այս ոլորտում Օսմանյանների տոհմը իր գոյության հենց սկզբից հանդես բերեց բացառիկ մոլեռանդություն ու հետեողականություն[37]։ Մուրադ I-ի սուլթանության շրջանում մտցվեց փենչիքի համակարգը, համաձայն որի քրիստոնյա դերիների ընդհանուր թվաքանակի մեկ հինգերորդին 2—3 տարով ուղարկում էին փոքրասիական թյուրքական ցեղերի մոտ, որտեղ նրանց դաստիարակ էին անում, սովորեցնում Թուրքերեն և օգտագործում էին ծանր ֆիզիկական աշխատանքների համար[38]։ Դրանից հետո նրանք վերադարձվում էին սուլթանի արքունիք՝ համալրելով նրա անձնական ծառաների և նոր ստեղծված ենիչերիական զորքի կազմը[39]։ Փենչիքը (արաբերեն՝ խումս) համապատասխանում էր Ղուրանի պատգամին. «Եվ իմացեք, եթե դուք վերցրել եք ավար, ապա Ալլահինն է հինգերորդ մասը, և նրա կողմից ուղարկվածինը, և հարազատներինը, և որբերինը, և աղքատներինը, և ճանապարհորդինը...»[40]։ Շարիաթի հարկային համակարգում սա մահմեդականներից պետության կողմից գանձվող ամենակարևոր հարկերից մեկն էր[41]։ Այդ հարկը գանձվում էր նաև Փոքր Ասիայի այլ թյուրքական բեյություններում, մասնավորապես, Այդընի բեյությունում[42]։ Սակայն օսմանցիները հարմարեցրին այն ռազմական պահանջներին, ինչը նրանց հսկայական առավելություն տվեց մնացած բեյությունների նկատմամբ։

Հետագայում, երբ պակասեց ռազմագերիների հոսքը, մոտավորապես XIV դարի կեսերից սկսեց կիրառվել դևշիրմեի (մանկահավաքի) համակարգը, որի իրականացման ընթացքում ծնողներից խլում և ստրկացնում ու Թուրքացնում էին օսմանյան իշխանության տակ գտնվող քրիստոնյաների արու դավակներին[43]։ Դևշիրմեն, ինչպես նշվել է մասնագետների կողմից, հակասում էր շարիաթին[44]։ Դիմելով դևշիրմեին առաջին Թուրք սուլթանները լուծում էին կարևորագույն խնդիր՝ ոչ միայն հզորացնել բանակը, այլ նաև պահպանել իրենց իշխանությունը քրիստոնյա բնակչության վրա։ Նույն նպատակին էին ծառայում հենց իրենք՝ ենիչերիները, որոնք օգտագործվում էին նաև Բալկանների մահմեդականացման գործընթացում[45]։ Այդ կազմում էր հպատակ ժողովուրդների նկատմամբ օսմանյան իշխանությունների կողմից իրականացվող քաղաքականության բաղկացուցիչ մասը, որն իր վերջնական տեսքով հանդես եկավ ավելի ուշ, XVI—XVII դարերում[46]։

Ի տարբերություն ավելի ուշ շրջանի Օսմանյան կայսրության, բեյության բնակչության կազմը ավելի միատարր էր։ Վերնախավը կազմում էին թյուրքական տարբեր ցեղերի ներկայացուցիչները՝ ղազիները, Օսմանյան

---

37 H. Vambery. Da. Türkenvolk in seinen ethnologischen und ethnographischen Beziehungen. Leipzig. 18.5, S. 60J.

38 Տե՛ս W. Eton. A Survey of the Turkish Empire. London, 1798, p. 62.

39 Տե՛ս И. Е. Петросян. К истории создания янычарского корпуса, с. 193—196.

40 Коран, 8, 42.

41 Г. М. Керимов. Шариат и его социальная сущность. М., 1978, с. 173—179.

42 К. А. Жуков. Эгейские эмираты в XIV—XV вв., М., 1983, с. 126.

43 Տե՛ս ավելի մանրամասն Մանվել Զուլալյանի բովանդակալից հոդվածում, Մ. Կ. Զուլալյան. Դեվշիրմեն (մանկահավաքը) Օսմանյան կայսրությունում ըստ Թուրքական և հայկական աղբյուրների.—ՊՊՀ, 1959, № 2—3, էջ 247—256։

44 Մ. Կ. Զուլալյան. Արևմտյան Հայաստանը XVI—XVIII դդ. Երևան, 1980, էջ 328։

45 Er. Werner. Die Geburt einer Grossmacht – Die Osmanen (1300 – 1481). Berlin. 1966. S. 12 – 14.

46 Այդ հարցին ավելի մանրամասն կանդրադառնանք ստորև։

տոհմի և ցեղեր զանազան եղբայրությունների ու թարիքաթների անդամներ։ Նրանց ձեռքով էր կենտրոնանում ռազմավարի հիմնական մասը։ Նրանք էին տիրապետում անընդհատ ընդլայնվող երկրի հիմնական հողային և մարդկային ռեսուրսներին՝ իքթաների միջոցով։ Նրանք էլ ձևավորվող պետության ռազմական ու հոգևոր ղեկավարներն էին։ Կարելի է համաձայնվել Քյոփրյուլյուի հետ, երբ նա գրում է, որ XIV դարի բոլոր խոշոր պետական գործիչները թյուրքեր էին[47]։ Այսպես սկսեց ձևավորվել օսմանյան իշխող ռազմա-ֆեոդալական դասակարգը։ Դավանափոխ քրիստոնյաների ներգրավումը իշխող դասակարգի մեջ XIII—XIV դդ. կրում էր եզակի բնույթ։

Այդ դասակարգի իշխանությունը հիմնվում էր զինված ուժի օգտագործման ամենազդման ձևերի վրա։ Որպես օժանդակ, սակայն կարևոր միջոց, հանդես էր գալիս քրիստոնյաների բռնի մահմեդականացումը, որը հասել էր մեծ չափերի։ Իրականությանը չի համապատասխանում նույն հեղինակի պնդումը այն մասին, որ այդ շրջանում մահմեդականացումը կրում էր «սահմանափակ բնույթ և ընթանում էր դանդաղ[48]։ Դեռևս անցյալ դարում գիտական շրջանառության մեջ դրված փաստերը վկայում են, որ արդեն 1334 թ. ողջ արևմտյան Փոքր Ասիայում միայն Ֆիլադելֆիան էր մնացել էթնիկական առումով հունական քաղաք[49]։ Քրիստոնյաների որոշակի քանակի պահպանումը պայմանավորված էր զուտ տնտեսական պատճառներով, քանի որ թյուրքական քոչվոր ու կիսաքոչվոր ցեղերը դեռևս չունեին տնտեսավարման անհրաժեշտ ունակություններ։

Ջիֆթչիները (չիֆթլիկների տերերը), որոնք, ինչպես նշվեց վերևում, ներկայացնում էին զարգացման ավելի ցածր մակարդակի վրա գտնվող թյուրքական ցեղեր, կազմում էին միջանկյալ խավ։ Հետագայում, երբ յայաների ու մյուսելլեմների ջոկատները կորցրեցին իրենց ռազմական նշանակությունը, նրանք զրկվեցին իրենց արտոնություններից ու համալրեցին մահմեդական գյուղացիության շարքերը։

Ստորին խավը կազմում էին կենդանի մնացած քրիստոնյաները։ Նրանց թիվը այդ շրջանում համեմատաբար մեծ չէր, քանի որ ռազմավարի մեծ չափերի և հասարակության ու պետության պարզունակ կառուցվածքի պայմաններում օսմանյան իշխող դասակարգը մեծ շահագրգռվածություն չուներ նրանց աշխատանքի արդյունքների մեջ։

Այսպիսով, իրենց պատմության ամենավաղ շրջանից սկսած օսմանյան թուրքերը ընկալում էին իրենք իրենց որպես առաջամարտիկներ՝ քրիստոնյաների դեմ պայքարում։ Այդ ստեղծում էր նրանց միջավայրում համապատասխան ավանդույթների և հաստատությունների առկայության պայմաններում հակաքրիստոնեական ռազմատենչ մոլեռանդության յուրահատուկ մթնոլորտ և թելադրում էր մեկ գերխնդիր՝ նվաճումներ ջիհադի քողի ներքո։ XIII—XIV դդ. օսմանյան պետությանը բնորոշ էին համեմատաբար միատարր բնույթը, կրոնական մոլեռանդությունը և գերռազմականացումը։ Նրա գոյությունը հիմնականում ապահովվում էր զինված թալանի միջոցով, իսկ պետական գաղափարախոսությունը՝ արտաքին ու ներքին ջիհադի կոնցեպցիան էր։ Չի կարելի համաձայնվել Հ. Ինալջըքի հետ, երբ նա գրում է օսմանյան բեյության հատուկ կրոնական հանդուրժողականության մասին[50]։ Այն, ըստ էության, ինչպես և Փոքր Ասիայի արևմուտքում առաջացած այլ թյուրքական բեյություններ, պարզապես կամ ղազիների պետություն (Ghazi State) էր[51]։ Սակայն նա միակ ղազիական բեյությունն էր, որը վերածվեց կայսրության։

(շարունակելի)

---

47 F. Köprülü. Osmanlı Devletinin..., s. 83.
48 Տե՛ս Ibid., s. 82.
49 H. Vambery. Das Türkenvolk..., S. 598.
50 H. Inalcık. The Ottoman Empire..., p. 7.
51 Այս հասկացության հեղինակը Պ. Վիտտեկն է։